ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՄԱՐԻՆԵ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Գաղտնիք չէ, որ 21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման դարաշրջան է: Մարդկային գործունեության բոլոր ոլորտների տեղեկատվական վերազինումը, միասնական տեղեկատվական տարածության կազմավորումը, գլոբալ տեղեկատվական հեռահաղորդակցման ցանցերի ստեղծումը փոխում են հասարակական կյանքի զարգացման ողջ ընթացքը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումն ու ներդրումն իրենց ազդեցությունն են թողնում հասարակության աշխարհաքաղաքական և սոցիալական բնույթի վրա: Ինչպես նշում է ամերիկացի հայտնի փիլիսոփա Է. Թոֆֆլերը. «...տեղեկատվական հեղափոխությունը ենթադրում է նոր կենսակերպ, մարդկային հարաբերությունների որակական նոր մակարդակ»[1]: Ավելին, տեղեկատվական տեխնոլոգիաները մեծապես նպաստում են հասարակության էվոլյուցիոն զարգացման տեմպերի արագացմանը: Մենք ապրում ենք մի դարաշրջանում, երբ խորհրդավոր կերպով սկսում է գերիշխել մեքենան: Եթե 19-րդ դարի առաջին կեսին մեքենան արտադրությունից դուրս մղեց ձեռքի աշխատանքը, ապա արդի աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու ներդրումը հիմք հանդիսացան, որ մեքենան աստիճանաբար գերիշխի մարդու և նրա գործունեության վրա: Թեև նրանք մարդկությանը տալիս են նորանոր հնարավորություններ, բայց միաժամանակ ծնում են նոր սպառնալիքներ՝ վերջինիս հատուկ բացասական հետևանքներով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում խորացրել է մարդկանց կախվածությունն այդ տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից: Ինտերակտիվ էկրանն ուղեկցում է մեզ ամենուր: Այն, որպես վիրտուալ իրականություն, ենթադրում է հաղորդակցման ամենավերացական ձևը: Իհարկե, համակարգիչները միայն

---

[1] Տե՛ս **Тоффлер Э.** Третья волна, М., 1999:

վիրտուալ աշխարհին չեն պատկանում, նրանք օգնում են մտածել անորոշ իրավիճակներում, մասնավորապես երբ անհրաժեշտ է իրականացնել բարդ և տարաբնույթ հաշվարկներ: Անշուշտ, այստեղ տրամաբանության մասին խոսք լինել չի կարող: Ժամանակակից բանական մարդը համակարգչի օգնությամբ հատում է հոգևոր տարածությունը: Վիրտուալ մարդը համակարգչի էկրանի առջև կարծես թե վերածվում է «անշունչ» էակի՝ կտրված իրականությունից, իսկ մտքի սեփական վերլուծական ունակության փոխանցումը մեքենային նրան զրկում է ինքնուրույն մտածելու կարողությունից: Դա այն գինն է, որը պետք է հաշվի առնել: Ինչպես ակնոցը կամ ոսպնյակն է տեսողությունը կորցնողի համար դառնում արհեստական տեսողական անդամ, այնպես էլ համակարգիչն է դառնում արհեստական դատողական անդամ այն մարդկանց համար, ովքեր կորցնում են դատելու ունակությունը: Համակարգչային և այլ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը սահմանափակում է նաև մարդկանց միջև շփումը, կարող է մարդուն կտրել իրականությունից, ստեղծել իրականությանը փոխարինող արհեստական միջավայր և դրանով ուժեղացնել սոցիալական ինքնամեկուսացումը:

Թեև համացանցը հնարավորություն է ընձեռում ստեղծելու «ունկնդիր-ների» մեծ բանակ, այնուամենայնիվ այն չունի մի շարք կարևոր հատ-կանիշներ, որոնք բնորոշ են անմիջական հաղորդակցմանը: Խոսքը միայն այն մասին չէ, որ անմիջական հաղորդակցման ընթացքում ստանում ենք ամբող-ջական տեղեկատվություն օբյեկտի ֆիզիկական կառուցվածքի, ժեստերի և այլնի մասին: Կարելի է ենթադրել, որ դա նույնիսկ առավելություն է, քանզի ուշադրության կենտրոնում մնում է միայն փաստարկումը, իսկ դրական կամ բացասական ներշնչանքն անհետանում է՝ իր տեղը զիջելով իրականության օբյեկտիվ ընկալմանը: Իրականում փաստարկումը պահանջում է ստուգում և հիմնավորում, որի համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ: Հայտնի է, որ ժամանակ հասկացությունը ենթադրում է արագություն, իսկ արագության առավելությունն այս պարագայում վերածվում է թերության: Օրինակ, հարցերը, պատասխանները, մեկնաբանությունները հաջորդում են միմյանց, և այստեղ սեփական կարծիքը ձևավորելու ժամանակ չի մնում: Բացի այդ, ցանկացած պահի կարելի է ընդհատել հաղորդակցումը՝ առանց պատասխանատվության զգացողության, որն անմիջական հաղորդակցման կարևորագույն առանձնա-հատկությունն է: Սխալ է այն կարծիքը, թե համակարգչային ցանցն ընձեռում է անհատականության բացարձակ դրսևորման հնարավորություն: Իրականում կարևորը ցանցն է, կազմակերպությունը, այլ ոչ թե անհատը: Համաշխարհային

և տեղական ցանցերի զարգացումը հանգեցնում է «վիրտուալ հասարակությունների» ձևավորմանը: Համակարգչային ցանցը հնարավորություն է տալիս առանց տնից դուրս գալու աշխատելու, գնումներ կատարելու և հաղորդակցվելու: Ինչպես Դուբրովսկին է ասում, «...այդպես ստեղծվում է մոնադա՝ առանց պատուհանների սենյակ, որի բնակիչը տեղեկացված է շրջապատում կատարվող ամեն ինչի մասին»[2]: Անհետանում է աշխատանքի և աշխատատեղերի խնդիրը: Համակարգիչը կապում է մարդուն ոչ միայն այն ձեռնարկության հետ, որն աշխատանք է առաջարկում, այլև ամբողջ աշխարհի հետ: Համացանցը չի ոչնչացնում քաղաքի տարածությունը, այլ նրան տալիս է նոր չափանիշներ: Հենց ինքը՝ ցանցը, դառնում է գլոբալ քաղաք: Վիրտուալ համայնքները փորձում են ստեղծել ինքնատիպ, անվտանգ թաղամասեր արտոնյալների համար, ավելի լավ աշխարհ, որտեղ մուտքը բավականաչափ բարդ է: Միացման և անջատման նոր համակարգը փորձում է դիմակայել աղմուկին, աղբին, բռնությանը՝ օգտագործելով նաև «էլեկտրոնային պատերը»: Դրանց սահմաններից դուրս շրջում են հանցավոր խմբեր, թմրամոլներ, ահաբեկիչներ և հոգեկան հիվանդներ: Հասարակությանը նրանք սպառնում են ոչ միայն ֆիզիկական բռնությամբ կամ ինֆեկցիոն հիվանդություններով, այլ նաև ստեղծելով սեփական արատների էլեկտրոնային տեսակները: Անօրինական վեբկայքերն առաջարկում են մանկական պոռնոգրաֆիա, պայթուցիկ նյութերի պատրաստում, տարածում են ահաբեկչության և ազգայնամոլության քարոզ և այլն: Ակնհայտ է, որ այս ամենը մտածելու տեղիք է տալիս. չի՞ առաջանում արդյոք նոր չարիք, ինչպե՞ս դիմակայել տեղեկատվական նոր սպառնալիքներին:

Ռադիոճառագայթումը սկսվել է Հիրոսիմայից, իսկ հոգու ճառագայթումը զանգվածային տեղեկատվական միջոցների կողմից շարունակվում է մինչև օրս: Երեխաներն արդեն, կարելի է ասել, գրքեր չեն կարդում, նրանք իրենց ժամանակը հիմնականում անցկացնում են հեռուստացույցի և համակարգչի առջև: Անշուշտ, սա ունի իր հետևանքները: Ամենամեծ խնդիրներից մեկը կապված է կրթության համակարգի հետ: Եթե գիրքը սովորեցնում է մտածել, ապա էկրանը սովորեցնում է մանիպուլյացիայի ենթարկել: Ժամանակակից կրթական ծրագրերը պատրաստում են միայն «տեսնող մարդիկ»[3]:

---

[2] Տե՛ս **Дубровский Е.Н.** Информационно-обменные процесы как факторы эволюции общества, М., МГСУ, 1996, էջ 72:

[3] Տե՛ս **Жданов В.С., Шапкин Ю.А.** Концепция информатизации оброзования // Социальная информатика, М., 1990, էջ 92:

Նախկին գծային մտածողությանն այսօր փոխարինելու է եկել պատկերային մտածողությունը: Պատկերները հնարավորություն են տալիս աննկատելիորեն ազդելու մարդկանց մտածողության և զգացմունքների վրա: Արդի աշխարհում մարդը, ինչպես Իվանովն է նշում. «...ապրում է նշանների ունիվերսումում, որն այսօր ստեղծվում է հիմնականում զանգվածային տեղեկատվական միջոցների և էլեկտրոնային տեխնիկայի միջոցով»[4]:

Զանգվածային տեղեկատվական միջոցներում կատարվող փոփոխությունը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից: Իհարկե, նրանք աշխարհը տեսնելու ավելի մեծ հնարավորություն են տալիս, աշխարհն ավելի բաց են դարձնում մարդկանց համար: Բայց միաժամանակ նկատվում է ազգային առանձնահատկությունների նկատմամբ պահանջի փոփոխություն: Հայկական տեղեկատվական միջոցներում գերակայության խնդիրն էականորեն փոխվել է: Եթե նախկինում գերիշխող էր ազգային մշակույթը, ապա այսօր հեռուստադիտողը գտնվում է օտար մշակույթի, հատկապես ամերիկյան կինոյի ուժեղ ազդեցության տակ: Ուր կտանեն մեզ նման զարգացումները՝ ցույց կտա ժամանակը, բայց ակնհայտ է, որ պետք է դրվեն որոշակի սահմանափակումներ:

Մյուս կարևոր խնդիրն այն է, որ ժամանակակից զանգվածային հաղորդակցման միջոցները ոչ միայն տեղեկատվության, այլ նաև բռնության ու սպանության տարածման միջոցներ են: Ըստ արևմտյան սոցիոլոգիական տվյալների, եթե 70-ական թվականներին հեռուստացույցով ցուցադրվում էր օրը երեք սպանություն, ապա այսօր՝ տասից ավելի սպանություններ[5]: Այսինքն՝ անչափահասները հեռուստացույցով արդեն տեսել են հազարավոր սպանություններ: Որպեսզի համոզվենք աճո՞ւմ, թե՞ նվազում է բռնությունը հասարակության մեջ, բավական է, որ մեր շուրջը նայենք: Հեռուստաէկրանը ուղեկցում է մեզ ամենուր, նույնիսկ հարսանեկան ու թաղման արարողություններն են ցուցադրվում հեռուստատեսությամբ ու վերածվում շոուների: Իջել են հեռուստահաղորդումների բարոյականության չափանիշները, ցուցադրվում են տարաբնույթ էրոտիկ ֆիլմեր ու շոուներ: Իսկ հեռուստադիտողի մեջ պակասել է պատասխանատվության զգացումը, տեսածը նրա մեջ չի առաջացնում պատասխան գործողությունների արձագանք: Հեռուստադիտող հասարակությունն ամբողջովին տարբերվում է այն հասարակությունից, որը ստեղծվել է

---

[4] Տե՛ս **Иванов Н.А.** Концепция информационного общества в современной философии, М., 1995, էջ 23:

[5] Տե՛ս Информационное общество: Сб.-М.,ООО Издателство АСТ, 2004, էջ 470:

գրի ու գրականության հիմքի վրա, որը քննարկում էր թերթերն ու ամսագրերը, մշակում ճաշակի, բարոյականության ու առողջ դատողության համընդհանուր նորմեր, որոնք մեծ ազդեցություն էին գործում մարդկանց, քաղաքականության ու մշակույթի վրա: Հասարակության ու հեղինակի միջև փոխադարձ կապ կար: Հասարակությունը մեծ ազդեցություն ուներ հեղինակի վրա: Իսկ այսօր հեռուստատեսությունում այդպես չէ: Հեռուստահաղորդավարը չի սպասում մեր պատասխանին: Հեռուստատեսությունը միակողմանի հաղորդակցում է:

Անշուշտ, ամեն ինչ չպետք է տեսնել միայն սև գույներով: Շատ մարդկանց համար հեռուստատեսությունն աշխարհը տեսնելու միակ հնարավորությունն է: Բայց չի կարելի չնկատել, ինչպես Գրոմովն է ասում, «հասարակության նոր բևեռացումը»[6]: Մարդկանց մի մասն այսօր տեղեկատվություն է ստանում՝ օգտագործելով նոր էլեկտրոնային միջոցներ, իսկ բնակչության մեծ մասի համար հեռուստատեսությունը տեղեկատվության միակ աղբյուրն է: Աստիճանաբար ձևավորվում է նոր էլիտա, որը շատ լավ տիրապետում է տեղեկատվական նոր միջոցներին: Կրթական համակարգը նույնպես ձևափոխվում է: Համացանցը, մետաղամալուխային հեռուստատեսությունը, հատուկ ֆիլմերն ու ծրագրերը, երաժշտական համերգները, գեղարվեստական ցուցահանդեսները և այլն, որ գրանցված են սկավառակների վրա, ընդլայնում են մարդկանց հնարավորությունները: Բայց ո՞վ է դրանց հեղինակը, և ո՞վ է պատասխանատու դրանց համար:

Ժամանակակից աշխարհում հեռուստատեսության բնույթը ամբողջովին փոխվել է: Հեռուստացույցը, համակարգիչը և հեռախոսը, միավորվելով մեկ համակարգի մեջ, ստեղծել են ինտերակտիվ հեռուստատեսություն: Շատ մարդիկ սկսել են գիշերներն անցկացնել համակարգչի առջև: Նրանք հաղորդակցվում են ինտերնետի e-mail-երի, տվյալների բանկերի հետ և փոխանակում են ոչ միայն բանական, այլ նաև սենսորային տեղեկատվություն (հնարավոր է սեքսուալ զգացողությունների փոխանակում, ինչը բերում է ավանդական ամուսնության ինստիտուտների լուծարմանը): Այսինքն՝ մարդկանց անմիջական հաղորդակցումը փոխարինվում է համակարգչի հետ հաղորդակցումով: Համակարգիչը մարդկանց տանում է մեկուսացման, իսկ հասարակությանը՝ միասնության քայքայման: Համակարգչային ցանցերի ու արբանյակային կապի շնորհիվ մարդիկ հարյուրավոր հեռուստաալիքներ դիտելու հնարավորություն ունեն, իսկ ի՞նչը նրանք կընտրեն: Ինչպե՞ս կազդեն հեռուստախանութներն ու հեռուստաբանկերը մարդկանց վարքի վրա, և ինչ-

[6] Տե՛ս **Громов Г.** Очерки информационной технологии, М., 1993, էջ 19-20:

պե՞ս կարծագանքի դրան քաղաքական մշակույթը: Այս կամ նման հարցերը վախ են առաջացնում: Հարց է առաջանում՝ այս ամենից հետո կփոխվի՞ աշխարհը: Կարծում եմ՝ այո՛:

Արդի հասարակությունում չպետք է անտեսել համակարգչային մշակույթի բացարձակացումը: Այն մարդկանց սովորեցնում է միմյանց հետ շփվել ալգորիթմների միջոցով, սովորեցնում է միօրինակ կանոնների ու միապաղաղ գործողությունների: Մինչդեռ գիրքը, դասագիրքը և գրադարանն են այն հենակետերը, որոնց վրա պետք է հենվի մտածող մարդը, և կառուցվեն հասարակական կարգն ու կանոնը: Իհարկե, գրադարանից տեղեկատվություն ստանալը այնքան էլ հեշտ ու հարմարավետ չէ, որքան ինտերնետ համակարգից, բայց պարզամտություն կլինի նաև հավատալ ինտերնետ համակարգում տեղեկատվության տարածման քաղաքականության ազատականացմանը: Իրականում այն ունի ընտրասերման իր սկզբունքները (օր. տեղեկատվությունը վերածվում է նշանների խմբի) և համապատասխանաբար ստեղծում է օգտվողների սեփական բանակը: Սա իշխանության նոր ձև է, որը ոչնչացնում է ազգային պետականության սահմանները:

Իհարկե, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք, ինչպես ռուս փիլիսոփա Մեդվեդևն է նշում, «փոխեցին մեր կենցաղն ու մտածողությունը»[7], մարդուն տալիս են բազում հնարավորություններ: Նրանք հնարավորություն են տալիս միավորելու երաժշտությունը, գեղանկարչությունը, գրականությունը, գիտությունը, փիլիսոփայությունն ու քաղաքականությունը: Այն, ինչ նախկինում տարանջատված էր ձևով և բովանդակությամբ, այժմ հանդես է գալիս որպես մի ամբողջություն: Այն, ինչ նախկինում պահանջում էր համապատասխան կրթություն, սոցիալական դիրք, նյութական միջոցներ ու ազատ ժամանակ, այժմ մատչելի է բոլորին: Երաժշտության ու գեղանկարչության գլուխգործոցները մատչելի են դարձել համացանցի շնորհիվ, բացի այդ նրանք տարբեր տեսահոլովակների ու ժամանցային ծրագրերի բաղկացուցիչ մասն են կազմում: Արվեստի գլուխգործոցները, գիտական տեսությունները, քաղաքական գաղափարախոսությունները, այսինքն՝ այն ամենը, ինչը յուրացնողից պահանջում էր կրթվածության բարձր մակարդակ, հատուկ պատրաստվածություն, այժմ զանգվածային տեղեկատվական միջոցները մատուցում են շատ պարզ ու մատչելի: Այսօր բոլորը ամեն ինչ գիտեն: Այս ամենը

[7]Տե՛ս **Медведев Е.А.** Основы информационной культуры // Социс, 1994, N11, էջ 59:

փոխում է մեր մտածողությունը, իրականությունը տեսնելու, գնահատելու և ընկալելու եղանակը: Աշխարհընկալման նախկին կանոնավոր եղանակը, որը հիմնվում էր տրամաբանական հետևողականության, փաստարկման ու հիմնավորման վրա, այսօր իր տեղը զիջում է իմաստի ամբողջական ընկալմանը: Մատչելիությունը, անպաշտոնականությունը, անշուշտ, ժամանակակից զանգվածային տեղեկատվական միջոցների դրական հետևանքներն են, բայց գիտականի, գեղարվեստականի, քաղաքականի և կրոնականի միախառնումը միշտ չէ, որ առավելություն է: Հատկապես վտանգավոր է այն հանգամանքը, որ ժամանակակից զանգվածային տեղեկատվական միջոցներում իշխանությունը տարրալուծվում ու անտեսանելի է դառնում, բայց միաժամանակ թափանցում է ամենուր:

Առաջատար երկրների համար ազգային տեղեկատվական համակարգի զարգացումը կարևոր քաղաքական ծրագիր է: Հայաստանը ևս շատ անելիքներ ունի այս ոլորտում: Վերը նշված բոլոր հիմնախնդիրներն առկա են ՀՀ-ում: Մարդու մեջ մարդկայինի ստեղծման ու գոյատևման և մեր հոգևոր արժեքների պահպանման համար անհրաժեշտ է ստեղծել կառույցներ, որոնք կվերահսկեն զանգվածային տեղեկատվական միջոցների կողմից տրվող տեղեկատվությունը՝ ելնելով տեղեկատվական անվտանգությունից: Համաշխարհայնացման դարաշրջանում տեղեկատվական վերազինման գործընթացները պահանջում են նոր մոտեցումներ, նոր քաղաքականության մշակում, որոնք կապահովեն տեղեկատվական անվտանգությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

ԱՄՓՈՓՈՒՄ

21-րդ դարը տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջան է: Մարդկային գործունեության բոլոր ոլորտների տեղեկատվական վերազինումն անմիջականորեն ազդում է հասարակության բնույթի ու նրա զարգացման վրա: Թեև տեղեկատվական տեխնոլոգիաները մարդկությանը տալիս են նոր հնարավորություններ, բայց միաժամանակ ծնում են նոր սպառնալիքներ: Տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը սոցիալական կյանքում առաջացնում է սոցիոմշակութային մի շարք փոփոխություններ: Այն նպաստում է մարդկանց մեկուսացմանն ու օտարմանը հասարակությունից: Տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են բռնության ու սպանության տարածման միջոց: Նրանք ազդում են մարդկանց մտածողության ու հոգեկերտվածքի վրա: Եթե մենք ցանկանում ենք, որ տեղեկատվական վերազինումը ծառայի մարդկության բարօրությանը, անհրաժեշտ է վերահսկել այս գործընթացը և

ապահովել տեղեկատվական անվտանգությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Բանալի բառեր - տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական վերազինում, ՀԼՄ, համացանց, համակարգիչ, տեղեկատվական հասարակություն:

НЕКОТОРЫЕ СОЦИОКУЛЬТУРНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ИНФОРМАЦИОННОЙ ТЕХНОЛОГИИ

МАРИНЕ ШАХБАЗЯН

Двадцать первый век – век информационной технологии. Информатизация всех сфер человеческой деятельности непосредственно влияет на сущность общества и на ее развитие. Хотя информационные технологии дают человечеству новые возможности, одновременно порождают новые угрозы. Широкое применение информационной технологии в социальной жизни производит разные социокультурные изменения, углубляет зависимость человека от техники, способствует изолированию и отчуждению людей от общества. Информационные технологии стали средством распространения убийств и насилия. Они воздействуют на мышление и душевное состояние людей. Если мы желаем, чтобы информационное перевооружение служило благосостоянию человечества, необходимо контролировать эту деятельность и обеспечить информационную безопасность во всех областях общественной жизнедеятельности.

Ключевые слова - информационные технологии, информатизация, СМИ, интернет, компьютер, информационное общество.

SOCIOCULTURAL ISSUES CONCERNING THE DEVELOPMENT OF INFORMATIONAL TECHNOLOGY

MARINE SHAHBAZYAN

The 21-st century is the age of information technology. The proliferation of the availability of information in all fields of human activities has a direct impact on the nature of society and its development. Though information technology gives rise to new possibilities, at the same time it brings about new menaces. The wide application of information technology in social life causes a number of sociocultural changes. It leads people to seclusion and estrangement from society. Information technology has become a way of spreading violence and murder.

It has a significant impact on the psychology and thinking of humans. If we are interested in making information technology beneficial to the welfare of people it is necessary to handle it and secure information safety in all spheres of life.

Key words - information technologies, proliferation of the availability of information, mass media, internet, computer, information society.